# Ապագա
## Հանդես

# APAGA
## Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ
1914
8-րդ ՏԱՐԻ

ISSN 1682-5438

Համար 64, մարտ , 2016 թ.

No. 64, March 2016

# *ԱՊԱԳԱ* No. Համար 64 (79) 2015 *APAGA*

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian, PhD.

*Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան*
*POBOX No. 15875-9488 Tehran – Iran*

WEB: www.apagaonline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com **ISSN 1682-5438**

---

## Բովանդակություն

Հայերեն Իրանահայ օրացույցներ, տարեգրքեր
Համշենահայերի տարեկան տոները

Անգլերեն Ահ ու սարսափի իշխանություն- Հայկական հարց

Պարսկերեն Իրանի գիտա-մշակութային դեմքերի վաստակի յուրացումը կեղծարար Ադրբեջանի հանրապետության կողմից

## CONTENTS

Armenian Armenian calendars and yearbooks in Iran
Armenian feasts in Hamshen

English A REIGN OF TERROR- The Armenian Question
Armenian feasts in Hamshen

Persian Falsification of the Iranian Cultural and Scientific personalities by Azerbaijan

---

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

**Subscriptions: $ 20 per year** Գինը 5000 ռիալ

# Իրանահայ օրացույցներ, տարեգրքեր

Դր. Էդ. Բաղդասարյան

Հայերը հնագույն շրջանից ի վեր տոմար են ունեցել, այս մասին է վկայում Անանիա Շիրակացին իր ,Տիեզերագիտության եւ տոմարե աշխատության մեջ։ Հենվելով այդ տեղեկության վրա, Ղեւոնդ Ալիշանը եզրակացրել է, որ մեր հայ ազգի սկիզբը եղել է մ.թ.ա 2492թ. եւ մեր ազգային գերագույն տոնը՝ օգոստոսի 11-23ը։ Ենթադրվում է, որ հայ ժողովրդի առասպելական նախահայր Հայկ Նահապետը ասորական Բելին այդ ժամանակ է հաղթել, եւ ի նշան այդ հաղթանակի, սահմանվել է նոր դարագլուխ եւ տոնվել տարեցտարի։

Հայկ Նախահոր անվան հետ կապված առասպելական թվականը որոշ տոմարագետների եւ պատմաբանների կողմից կոչվել է ,Հայկայ թուականե կամ ,Հայկայ շրջանե[1]։

Ա. Շիրակացին հիշատակել է Բուն Հայկական ամիսներն, ամսվա օրերի եւ ցերեկային եւ գիշերային ժամերի անվանումները[2]։

Հայերը մինչեւ քրիստոնեական թվականի ընդունումը, ըստ երեւույթին, առաջնորդվել են հայկյան, կամ ինչպես այն կոչվել է՝ ,բուն հայոցե թվականով, որը ընդունվել է նաեւ հայոց եկեղեցու կողմից եւ մինչեւ հիմնա էլ այդ առասպելական թվականը պահպանվում է եկեղեցական օրացույցնեում։ Այսպես օրինակ՝ 1970թ. էջմիածնի օրացույցի տիտղոսաթերթում ,բուն թուականին Հայոցե համարվում է 4462-4463-ը։

Հայոց հին շարժական տոմարի տարին ունեցել է 12 ամիս, յուրաքանչյուրը 30-ական օրով եւ 13-րդ լրացուցիչ՝ ավելյաց կոչվող ամիսը՝ 5 օր։ Ենթադրվում է, որ հայոց հին տոմարի ամիսների անունները կապված են առասպելական Հայկ Նահապետի որդիների եւ դուստերի անունների հետ։ Սրանք են.

1-Նավասարդ
2-Հոռի
3-Սահմի
4-Տրե
5-Քաղոց
6-Արաց
7-Մեհեկան
8-Արեգ
9-Ահեկան

---

[1] - Հ. Բադալյան. Հայոց տոմարի պատմություն. Երեւան, 1976թ., էջ 11։
[2] - Ա. Շիրակացի. Երեւան, 1979թ., էջ 256-257։

10-Մարերի
11-Մարգաց
12-Հրոտից
13-Ավելյաց

Այսպես համար 1,2,3,7,8,10-ը Հայկի դուստրերն էին, իսկ համար 4,5,6,12-ը նրա որդիներն էին, իսկ Մարգաց եւ Ահեկան ամիսները այսպես կոչվեցին, քանի որ այն ,ժամանակս ամառնայինք էին սոքաե[3]:

Հետագայում հայ իրականության մեջ առաջացել են ,Հայոց մեծ թվականը (սկսիզբը 551թ.), Հայոց փոքր թվականը (552+532): 1317-ին Ադանայի եկեղեցական ժողովում որոշվել է հրաժարվել Հայոց տոմարից եւ ընդունել հուլյան տոմարը, որը սակայն չի կատարվել: 1584-ին Հռոմի պապի կարգադրությամբ հրատարակվել է Նոր Գրիգորյան տոմարը: Հայոց տոմարը գոյատեւել է մինչեւ 20-րդ դ.: Հայաստանում 1920 թ. ընդունվել է Գրիգորյան տոմարը: Հայոց եկեղեցին պաշտոնապես այն ընդունել է 1923-ին, սակայն եկեղեցին եւ սփյուռքահայ որոշ հրատարակություններում Գրիգորյան տոմարով (փրկչական) գրվող թվականին զուգահեռ տրվում է նույն Հայոց բուն տոմարը (2492) եւ տոմարական թվականը (551):

Հայերեն անդրանիկ օրացույցը կոչվել է ,Պարզատումարե եւ տպագրվել է հայոց 961 թ.՝ 1512-ին, Վենետիկում, Հակոբ Մեղապարտի սարքավորած հայկական առաջին տպարանում: Այն փոքրիկ գիրք է, բաղկացած 59 թերթից: Նրանցից մեզ մնացել է 6 օրինակ[4]: Իսկ հայերեն Խորհրդային առաջին օրացույցը լույս է տեսել 1921-ին եւ պարբերաբար հրատարակվել է ամեն տարի: Օրացույցներ են հրատարակել նաեւ Հայաստանի ժուռնալիստների, նկարիչների միությունները, առանձին կազմակերպությունները եւ պարբերականներ: Սփյուռքի մշակութային, հայրենակցական, մարզական միություններն ու կազմակերպությունները, թեմական եւ եկեղեցական խորհուրդները, պատրիարքարանները նույնպես հրատարակում են բազմատեսակ օրացույցներ: Հայոց եւ աշխարհի ամենաերկարակյաց օրացույցը հրատարակում են Վենետիկի Մխիթարյանները (1775-ից)[5]:

## Իրանահայ առաջին օրացույցը

---

[3] - Հ. Բաղալյան. նշվ. աշխ., էջ 11-12:
[4] - Ա. Գ. Առաքելյան. Հայ ժող. մտավոր մշակույթի զարգացման պատմ., հ. 2, Երեւան, 1964թ., էջ 272:
[5] - ՀՍՀ.հ.12, Երեւան, 1986թ., էջ 583:

Իրանահայ առաջին տոմարագիրքը եղել է ,Գիրք Տումարաց որ պարզատոմար կոչիե, հրատ. Հով. ծրդ. Քթրչենցի, տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի, Ն. Ջ., 1647թ., 84 էջ:

Իրանահայ առաջին օրացույցի հրատարակության պատիվը պատկանում է Ջուղայեցի մի համեստ քահանայի՝ Տեր Դիոնիսիոս Տեր Եղիազարյանին (1834-89):

Տեր Դիոնիսիոսի օրացույցը հրատարակվում է Նոր-Ջուղայում՝ 1863 թվականին, եւ տպագրական, խմբագրական եւ ուղղագրական տեսակետից ունի բազմաթիվ թերություններ. այսուհանդերձ, իբրեւ իր միջավայրի առաջին փորձ եւ այն էլ մի ժամանակում, երբ վաղուց դադարել էր պարսկահայ տպագրությունը, արժանի է հատուկ ուշադրության, մանավանդ որ նրա հրատարակությունն արդյունք է անհատական նախաձեռնության եւ զոհողության:

Այժմ չափազանց հազվագյուտ այդ օրացույցը, որի մեկ օրինակը գտնվում է Ս. Ամենափրկչյան Վանքի մատենադարանում, փոքրադիր մի գրքույկ է, գրպանի ծավալով: Թերթերը համարակալված չեն, բայց ընդամենը պարունակում է 54 տպագրված էջեր, որոնցից առաջին երկու երեսներին երեւում է հետեւյալ մակագիրը.-

## ՕՐԱՑՈՅՑ
Վասն ամի Տեառն
1863
ԵՒ ՀԱՅՈՑ
ՌՅԺԲ
Տպագրեալ
ի Նոր Ջուղա

,Ի Հայրապետութեան Տ. Կ. Մատթէոսի Աստուածընտիր Կաթողիկոսի եւ յԱռաջնորդութեան Ա. Տ. Թադէոսի Ս. Արքեպիսկոպոսի Սրբոյ Ամենափրկչեան Վանոց Նոր Ջուղայե:

Երրորդ էջը պարունակում է տոմարական տեղեկություններ, որոնց հետեւում է երկու էջի վրա ամանորյան մի ոտանավոր, ,Օրացոյցե-ի կազմողի ստորագրությամբ՝ ,Բարեմաղթութիւնե վերնագրով:

Օրացույցի հաջորդ երկու էջերում տեղ է տրված ,Ժամանակագրութիւնք երեւելի անցից ինչ աշխարհիե մի ցուցակի, որից հետո 8-րդ էջում տպագրված է մի այլ ցուցակ՝ ամիսների հայատառ անգլերեն անունների, որոնք այն ժամանակ Հնդկաստանում եւ Ջուղայում սովորական գործածության մեջ էին: Ապա հետեւում է բուն օրացույցը (45 էջ), Հայոց եւ լատինական ամիսներով (հին ու նոր տոմար), եկեղեցական տոներով եւ հարակից ծանոթություններով:

Օրացույցի վերջում զետեղված է հետեւյալ հիշատակարանը, ուր հեղինակն անկեղծորեն խոստովանում է իր այդ տպագրական փորձի թերությունները. - ,Ներողամիտ լիցին ընթերցողք աղաչեմ սխալմանց օրացուցիս այսը նորոգ այժմ տպագրելոյ ի Նոր Ջուղա, զի ոչ յանդիտութնէ ի սպառ, այլ յակամայից պարտաւորումն այք իսկ եղեն, ըստ որում քանի մի առձեռն տառիւք տպեցաք, յորս եւ մինչ ոչ գտաք ուրոյն ըստ պատճաշի, առ հարկի պարտաւորեալ յայլատեսակ տառից ի տեղի միմեանց ի կիր արկաքե։

Արժե մի քանի տողով անդրադառնալ պարսկահայ այդ առաջին օրացույցի հրատարակության հանգամանքներին։ 1844 թվականին Ս. Կատարինյան օրիորդաց դպրոցի ապագա հիմնադիր Մանուկ Հորդանանյանը իր ուրիշ բարեգործությունների շարքում մի լրիվ տպարան է նվիրում իր ծննդավայր Նոր-Ջուղայի վանքին։

Այդ տպարանը, սակայն զանազան պատճառներով երկար ժամանակ անգործության է մատնվում, մինչեւ 1877 թվականին վանքի Առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոս Հովհաննիսյանի ջանքերով կարգի է բերվում եւ գործի լծվում, երբ տպագրվում են մի շարք օգտակար աշխատություններ, ի շարս որոնց Հարություն տեր Հովհաննիսյանի ,Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահանե երկհատոր ուսումնասիրությունը (1880թ.)։

Անգործության մատնված այդ տպարանի տառերից է, ահա՛ որ Տեր Դիոնիսիոս քահանան օգտվելով, իր իսկ ձեռքով շարում է եւ մի փոքրիկ ճնշիչ մեքենայի միջոցով տպագրում է իր կազմած օրացույցը։ Համառ եւ տոկուն ջանքեր, որոնք ակամայից մեզ հիշեցնում են նանից ավելի քան երկու դար առաջվա Խաչատուր Վարդապետ Կեսարացու աշխատանքները, երբ ինքնահնար միջոցներով 1638 թվականին նա տպագրեց առաջին գիրքը Իրանում եւ Միջին Արեւելքում։։

Տեր Դիոնիսիոսի օրացույցը հրատարակվում է միայն մեկ տարի։ Ապա 15 տարի հետո, շատ ավելի ճոխ եւ մաքուր հրատարակությամբ, լույս է տեսնում Վանքի պաշտոնական առաջին օրացույցը (1878թ.), որի պարբերական հրատարակությունը կանոնավորապես շարունակվում է ցարդ[6]։

1878 թվականից, հաջորդաբար լույս են տեսել Ն. Ջ. վանքի օրացույցները, որոնք երբեմն իրենց մեջ պարունակել են նաեւ շնչագրււոթյուններ, վիճակագրություններ, եւ հետաքրքիր այլ տեղեկություններ՝ խրատներ, գիտելիքներ եւ այլն։

Օրացույցների հաջորդական շարքը ընդհատվել է երկու անգամ, առաջինը 1893-1897 թվականներին, հինգ տարով, իսկ երկրորդը՝ 1940-1944 թվականներին՝ 5 տարի, երկրում տիրող աննպաստ պայմանների հետեւանքով։ Իսկ դրանից հետո շարունակվել է մինչ օրս[7] (2011) 124 համար։ Սա իրանահայ ամենաերկարակյաց օրացույցն է։

---

[6] - Ջ. Հանանյան. Պարսկահայ առաջին օրացույցը. Րաֆֆի օրացույց. 1952թ.։

Իրանահայ մյուս օրացույցներն ներկայուցվում են հետեւյալ ցանկով.

-եՕրացոյցե (գրպանի). Թեհրան, 1897թ., տպարան ,Ջաւահայե, կազմեց՝ Վաղարշակ Բժշկյան։

-եԱմանորե (պատի). Նոր Ջուղա, 1922թ. կազմեց՝ Հովհաննես Տեր Գրիգորյան։

-եՕրացոյցե (Վանքի եկեղեցական-գրպանի). Ն. Ջուղա, համառոտ։

Նոր Ջուղայում 1924 թվականի համար տպագրվել է երկու օրացույց, մեկը հին եւ մեկը նոր տոմարով։

-եԱրեւելքե (պատի). Թավրիզ, 1936թ., կազմեց՝ Անդրե Տեր Օհանյան։

-եԱրշալոյսե (պատի). Թեհրան, 1938թ., հրատ. Թեհրանի Երիտասարդաց Միության։

-եԱբովեանե (պատի, մեկ էջով). Թեհրան, 1946թ., կազմեց Ա.(՞) Հայրապետյան։

-եԱրշալոյսե (պատի). Թեհրան, 1955 թ., հրատ. Հայկ Գարագաշ, տպարան ,Ջափքարե։

-եԱրաքսե (պատի). Թեհրան, 1955թ., հրատ. Հրաչ Մարտիրոսյան։

-եՐաֆֆիե (պատի). հիմն. եւ հրատարակիչ, Տաճատ Պողոսյան. հրատարակվում է 1942 թվականից մինչ օրս (հրատարակում է նաեւ գրպանի օրացույց)։

-եՆաիրիե (պատի). հիմն. Սամվել Սարուխանյան, տպագրվում է 1954 թվականից. ներկա խմբագիր եւ հրատարակիչը Սեպուհ Ամիրխանյան՝ մինչեւ նրա մահը 2012. , հրատարում է նաեւ գրպանի օրացույց։

-եԿանթեղե (պատի). հիմնադիր եւ տարիների հրատարակիչ Հով. Տեր Պետրոսյան. 1959-ից մինչ առ այսօր, նրա մահից հետո հրատարակվում է Ալիքի կողմից։

,Աբովյանե. հրատարկվել է 1982թ., Աբովյան Ազգային եւ մշակութային միություն. հրատարակիչ Սուրեն Համբարչյան։

-եԱլիքե օրացույց. 1982-1985թթ., Ալիք օրաթերթի հրատարկչ.։

-եԶարենցե. 1981-84թթ., հրատարակ. Հայ Մշակութային Կազմակերպություն. Խմբագիր Կարո Հակոբյան։

-եԳարունե. 1983-89թթ., հրատարկ. Իրանահայ Ազգային եւ մշակութային միություն.

-եՀույսե երկշաբաթաթերոի օրացույցը. 2009թ.։

---

[7] - Լ. Գ. Մինասյան. Նոր Ջուղա. Օրացույցները. էջ 69-70 եւ նույնի հայ տպագիր գիրք… էջ 13։

-Հ. Մ. Մ. «Րաֆֆի» համալիրի օրացույց. 2011թ., միության 30-ամյակի առիթով։

-Ընդարձակ օրացույց 1921 թվականին Քրիստոսի եւ հայոց ՌՅՀ-1370-տպ. Խբ. Ամփ. վանքի, Ն. Ջ., 1921թ., էջ՝ 122 (չհամարակալված)+108=230, չարվ. 9x5.4 սմ.։

-Պատի օրացույց «Ամանոր»

Նաիրի օրացույցը, սկզբից մինչեւ 1969 թվականը, հրատարակել է միայն Սամուել Մարուխանյանը, իսկ 1970-ից հետո նաեւ ընկերակցությամբ Սեպուհ Ամիրխանյանի։

Րաֆֆի օրացույցի տոները մինչեւ 1964 թվականը կազմել են Տեր Համբարձում ավ. քհն. Վարդանյանը եւ Արմենակ Ահարոնյանը, ապա այնուհետ, ինչպես եւ Նաիրի օրացույինը 1960 թվականից եւ կանթեղինը 1973 թվականից, Լեւոն Մինասյանը, իսկ 1960-ից առաջ Նաիրի օրացույցի տոները կազմել է Արմենակ Ահարոնյանը։

## Իրանահայ տարեգրքեր

1. **Մասիս**, Իրանհայ առաջին տարեգիրք, օրացույցը, Խմբագիր Հայկ Աճեմյան, հրատ. նախ Թավրիզում, ապա Թեհրանում, 1921թ.։

2. Պարսկահայ տարեցույց Ա. տարի 1927թ.- կազմեց՝ Հայկ Գարագաշ, ծաղրանկարնեը՝ Դեւի, տպ. ,Փարոսե, Թավ., 1927թ., էջ՝ 276, ծավ. 17x24 սմ.։

3.Պարսկահայ տարեցույց Բ. տարի 1929թ.- կազմեց՝ Հայկ Գարագաշ, ծաղրանկարները՝ Դեւի, տպ. ,Փարոսե, Թավ., 1929թ., էջ՝ 463, ծավ. 15x21 սմ.։

4.Պարսկահայ տարեցույց Գ. տարի 1930թ.- կազմեց՝ Հայկ Գարագաշ, ծաղրանկարները՝ Դեւի, տպ. ,Փարոսե, Թավ., 1930թ., էջ՝ 416, ծավ. 15x21 սմ.։

5.**Րաֆֆի տարեգիրք** (Ա. տարի)- կազմեց եւ հրատ. Տաճատ Պողոսյան, տպ. ,Մոդերնե, 1969թ., էջ՝ 583, չարվ. 11.8x19.7 սմ.։

6.**Րաֆֆի տարեգիրք** (Բ. տարի 1970թ.)- կազմեց՝ Տաճատ Պողոսյան, տպ. ,Մոդերնե, 1970թ., էջ՝ 687, չարվ. 11.8x19 սմ.։

7.**Րաֆֆի տարեգիրք** (Գ. տարի 1971թ.)- կազմեց եւ հրատ. Տաճատ Պողոսյան, տպ. ,Մոդերնե, 1971թ., էջ՝ 263, չարվ. 11.8x19.7 սմ.։ Ծանոթ. երի լինելով, լույս տեսավ միայն 1984 թվականին, Արմինե Պողոսյանի կողմից, Լ. Մինասյանի օժանդակությամբ, դարձյալ ոչ լրացած ձեւով։

8.**Րաֆֆի տարեգիրք** (Գ. տարի 1970թ.)- կազմեց՝ Տաճատ Պողոսյան, լրացուցիչ մասը 40 էջ՝ խմբագրեց՝ Լ. Գ. Մինսյան, տպ. Խբ. Ամփ. Վանքի, Ն. Ջ., 1984թ., էջ՝ 263, ծավ. 17x24 սմ.։

9.**Նաիրի տարեգիրք** Ա. տարի- Սեպուհ Ամիրխանյան, հրատ. ,Նայիրիե, տպ. ,Ֆարաբիե, Թեհր., 2004թ., էջ՝ 800, ծավ. 24.5x18 սմ.։

10.**Նաիրի տարեգիրք** Բ. տարի- Սեպուհ Ամիրխանյան, հրատ. ,Նայիրիե, Թեհր., 2008թ., էջ՝ 872, ծավ. 24x19 սմ.։

11.**Նաիրի տարեգիրք** Գ. տարի- Սեպուհ Ամիրխանյան, հրատ. ,Նայիրիե, Թհր., 2010թ., էջ՝ 862, ծավ. 24x19 սմ.։

# ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՄՇԵՆՑԻ ՀԱՅԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Հովիկ Ավանեսով**

***Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարան***
***Պատմա-իրավաբանական ֆակուլտետի մագիստրանտ***
***Ուսանողական գիտական ընկերության նախագահ***
***Շուշիի «Կաճառ»» գիտական կենտրոն ՀԿ անդամ***
***«Մելքոնյան» ռազմահայրենասիրական ակումբի տնօրեն***
***ԼՂՀ ԱԺ կից ԵԽ պատգամավոր***

Տրապիզոնի նահանգում նրանք հաստատվեցին 8-րդ դարում Օսմանյան իշխանությունները նրաց հանդեպ իրականացրին բռնի մահմեդականացման քաղքականություն: 1890-ականներից-1923թթ. ընկած ժամանակահատվածում համշենցի հայերը նույնպես ենթարկվեցին ցեղասպանության, իսկ վերապրածները սփռվեցին աշխարհով մեկ ձևավորելով համշեանական սփյուռքը[8]:

Մինչ օրս համշենցի հայերի տոների ու ավանդույթների վերաբերյալ հրապարակի վրա եղած ուսումնասիրությունները միակողմանի են: Այս հանգամանքը բավականին «արդյունավետ» օգտագործում է Թուրքիան այն հիլուր աշխարհին ներկայացնելով որպես «թուրքական»: Մեր կողմից կատարված սույն ուսումնասիրությունը համեստ փորձ է այդ բացը լրացնելու գործընթացում:

Մարդկության հասարակական կյանքը կազմված է աշխատանքային և տոնական օրերից: Յուրաքանչյուրն ըստ էության սահմանազիծ է, որից սկսվում է մի նոր գործ, մի նոր կյանք: Համշենցիների մշակութային և հասարակական կյանքում տոներն ու ավանդույթները կարևոր դեր են կատարում, որոնց արմատները գալիս են միջնադարից, ներկայումս ապակրոնացման պատճառով մի շարք տարրեր վերացվել են[9]:

### Նոր տարի / Ծաղկըմուտ- ծաղկամուտ/ - Կաղանդ,Սուրբ Ծնունդ /Քրիստոսի Ծնունդ/

**Ըստ տվյալների՝ վաղնջական ժամանակներում հայերը Նոր տարին դիմավորել են մարտի 21-ին[a] գարնանային**

---

[8] Ավանեսով Հ., Համշենահայերի ամանորը, §Ազատ Արցախ¦ հանրապետական թերթ, 2015 հունվարի 13:

[9] Խաչատրյան Ժ., Պետրոսյան Է., Համշենցիների տարեկան տոներնու խաղերը /ԺԹ դարի վերջ - Ի դար, Համշէն եւ համշէնահայութիւն /գիտաժողովի նիւթեր/, Երեւան-Պէյրութ 2007, էջ 223:

**գիշերահավասարի օրը, ինչը պատահական չէր: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, այդ պատճառով հենց այդ օրն էլ հայ մարդը դարձրել է Նոր տարի և նշել ցնծալի տոնախմբությամբ, որով փառաբանել է բնության զարթոնքը, աղերսել աստվածներին, որպեսզի տարին բերքառատ դարձնեն /այսօր էլ արիական որոշ ժողովուրդներª պարսիկները, աֆղանները, իբրև տարեսկիզբ ընդունում են մարտի 21-ը/:**

**Կաղանդ պապ**

**Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը /օգոստոսի 11-ը/: Ըստ ավանդության՝ Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելինª ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Այդ հաղթությունը ենթադրաբար տեղի է ունեցել մ.թ.ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ, որ նշանակում է Նոր տարի:**

**18-րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1-ը /համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ/, թեև նույնիսկ մինչև 19-րդ դ. կեսերը հայկական շատ գավառներում /Սյունիք, Արցախ, Ուտիք/ Նոր տարին շարունակում էր տոնվել օգոստոսին: Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը**[10]:

Համշենցիների Նոր տարին /ծաղկամուտը/ համընկնում է Յուլիան օրացույցի ժամանակների հետ, երբեմն տոնել են նաև Կաղանդը:

Յուլիան օրացույցի Կաղանդը նախորդել էր Սբ. Վասիլի Մեծին նվիրված շաբաթին: Ժողովրդական օրացույցի համաձայն՝ հունվարի առաջին օրերը հայտնի էին որպես Սբ. Վասիլիի օրեր:

---

[10] Ազգային տոներ /ավանդականն ու արդիականը/, Եր., 2002, էջ 3:

Դրա համար էլ հունվարի 1-ը համընկնում է պասի օրերին և օրենք է՝ տոնը դիմավորել ընտանեկան շրջանակում: Տոնական սեղանին դրվել են ամեն տեսակի պասավոր կերակուրներ: Հատուկ ուշադրություն է դարձվել կերակրատեսակների թվին, որն ուներ նաև սրբազան իմաստ: Առավելությունը տրվել է յոթ թվին, յոթ տեսակի, որոնց մեջ գերակշռել են հատիկային կերակուրները, դդումի տապակած միջուկով խմորեղենը:

Նախօրոք փռում պատվիրվել է 7 տեսակի խմորեղեն՝ ընտանիքի անդամների թվով, որոնցից մեկի մեջ դրվել է բախտավորության նշան: Երեկոյան՝ մայրամուտից հետո, համշենահայերը հատուկ ընտանեկան ճաշկերույթով նշել են Նոր տարին[11]: Սեղանին անպայման դրել են մի մեծ սափոր ջուր, 4 վառվող մոմ, որոնք պետք է այրվեին մինչև առավոտ: Եղևնու փոխարեն՝ որպես տոնական ծառ, գործածվել է երջանկություն բերող ձիթենու ճյուղ /եղևնին որպես տոնական ծառ սկսել են օգտագործել 1900 թվականից/, որը զարդարվել է ճեղքված ընկույզներով, չորացած թզով ու խնձորներով: Հավանաբար ճյուղը խրել են ծիսական հացի մեջ /կանգնեցնելու նպատակով/, ինչպես ընդունված էր հույների մոտ[12]:

**Երջանկություն բերող ձիթենու ճյուղ**

---

[11] Ավանեսով Հ., Համշենցի հայերի Ամանորը/ Ì ³ÕÏÁÙáõ ï -ծաղկամուտ/ նշելու ավանդույթը, §Ապառաժ¦, երկշաբաթաթերթ N22, 17-31, դեկտեմբեր 2014:

[12] Ավանեսով Հ., Համշենահայերի մշակույթի ընհանրական գծերը, §Մեսրոպ Մաշտոց համալսարան¦, թիվ 6, 2013:



**Հայկական ավանդական տոնածառ**

Նոր տարվա սեղանին պարտադիր էր չամչով համեմված խաշած եգիպտացորենի հատիկը և եգիպտացորենի ալյուրից, կաթով ու բուսական յուղով պատրաստված խաշիլը /արման/, որը մատուցվում էր մածնով: Պարտադիրներից էին ցորեն հացը, խորոված դդումով կարկանդակը, սիսեռը, չոր մրգերը, մեղրով ընկույզը:

Ամանորի ծիսական համակարգի մեջ մտնող «առաջինի» հմայական հատկության նկատմամբ ունեցած հավատից բխող գուշակությունները վերաբերվում են ամբողջ տնտեսական տարվան, վերջինիս ապահովության աստիճանը նախապես իմանալու կամ համապատասխան ձևով բնութեան ուժերի վրա ներգործելու ցանկություն: Այս բնույթի ծեսերից որոշ մասը անցել է քրիստոնեական Ամանորին: Դրանցից ամենից տարածվածն ու հարատևողը որոշ ազգագրական շրջաններում «տարի» կոչվող[13] /այլ տեղերում այլ անուններով-կրկենի կամ առանց անունի/, կլոր, ընկույզով և զանազան քաղցրեղեններով զարդարված հացի միջոցով տարվա առատությունը /բարաքյաթ/ որոշելու ծիսական սովորույթն է: Ջավախքում այս սովորույթը կար[a] տանտիկինը կաղանդի արշալույսին «տարին» տեփուրի մեջ դնելով, վրան մեղր էր լցնում և հարսների հետ տնից դուրս գալով, գավազանով խփում էր գետնին և երեք անգամ ասում. **«Դովլաթ, սարն ես, ձորն ես, արի տուն»** և նույն կարգով ներս գալիս, մեղրը բաժանում ամենքին, որ Նոր տարին քաղցր անցներ, իսկ «տարին» պահում էին երեկոյան գուշակության համար:

---

[13] Լալայան Ե., Ջաւախք.նշանավոր տօներ, Ազգագրական հանդես, N2, գիրք Բ, Թիֆլիս 1897, էջ 246,Շահազիզ Եր., Նոր-Նախիջեւան եւ Նոր-Նախիջեւանցիք. Ծէսեր ու սովորութիւններ, Ազգագրական հանդես N 9, գիրք 9, Թիֆլիս,1902, էջ 5:

«Տարի» կոչվող այդ հացը Նոր Նախիջևանում, օրինակ ավելի որոշակիորեն էր պահել իր հին արտաքին տեսքը, որը ուղղակիորեն խոսում է այն Ամանորին նվիրված լինելու մասին: **«Տարին,-գրում է Եր. Շահազիզը, - որ տարվա իսկական նշանն է, մի մեծ բոլորիշ և տափարակ հաց է, եւ այնպես է շիված, որ վրան պարզ կերպով երեւում են մի քանի մասեր կամ ճյուղավորություն: Այդ մասերի կամ ճյուղերի թիվը լինում է 12 հատ, տարվա 12 ամիսների թվով, կամ տան մեջ եղած անդամների թվին համեմատ**[14]«:Տարի հացը Ալաշկերտի և Մշու գաղթական գյուղերում **«Միջունքին»** են պատրաստում մինչև անգամ աներանք ու կեսրանք նշանադյալ հարսնացուներին ու փեսացուներին էլ առանձին բաժին են հանում ու մի ընծայի հետ ուղարկում նրանց [15]:

**Տարի հաց**

Այլ ազգագրական շրջաններում գուշակության հացը լինում էր կլոր, չոր մրգերով և ընկույզներով զարդարված, որի մեջ մեծ մասամբ դրվում էր դրամ և այդպես թխվում: Այդ հացի միջոցով Ամանորին գուշակությունը կատարվում էր այսպես. հացը կտրում էին ընտանիքի անդամների թվին համապատասխան /իսկ համշենցիները նաև անասուններին էին նկատի ունենում/ և բաժանում յուրաքանչյուրին: Գուշակության հմայության ծեսերն այլ ազգագրական շրջաններում ընդգրկում էին այլևայլ ձևեր [16]:

Ըստ Բ. Թոռլաքյանի՝ Համշենցի հայերի տան տիկինը խնձորներից մեկի մեջ թաքցրել է բախտի նշանը /մի մետաղադրամ/, որոշ ազգագրական շրջաններում մետաղադրամի փոխարեն օգտագործվել է չորացած մրգեր, կորիզներ [17]/ ՀԱ/, ընտանիքի գլխավորը, խնձորը կտրելով, բաժանում էր բոլորին: Ում ընկներ նշանը, նա համարվում էր երջանիկ և հաջողակ մինչև տարվա վերջը[18]: Սակայն դժվար է պատկերացնել, թէ ինչ մեծության պետք է լիներ այդ խնձորը, որ բավարարեր ամբողջ ընտանիքին: Ըստ դաշտային հետազոտությունների խնձորով լիքը /ընտանիքի անդամների թվով/ մատուցարանը դրվել է սեղանին, որոնցից մեկի մեջ տանտիրուհին տեղադրել էր արծաթադրամ[19]: Բոլորը հույս էին փայփայում, որ դրամով խնձորը պետք է իրենց բաժին դառնա: Ըստ հավատալիքների՝ երջանկացած անձը երջանկություն և հաջողություն էր բերում ոչ միայն իր ընտանիքին, այլև այն ընտանիքին, ում տանը Նոր տարում առաջին անգամ ոտք դներ: Ռուսական միջավայրում նա կոչվում էր առաջին այցելու **/полазник/:** Հայերի մեջ առաջին այցելուի բարեբերության հավատը պահպանվել է մինչև օրս: Նշանի տերը առավոտյան գնում էր աղբյուրը՝ ջրի, լցնում տան բոլոր ջրամանները: Նրա պարտադիր ու կարևոր պարտականությունը տան անասուններին ծիսական ուտեստով կերակրելն էր: Գոմ մտնելով՝ նա առաջին հերթին գոմի բոլոր անկյուններում ցորենի հատիկներ էր շաղ տալիս, ապա անասուներից յուրաքանչյուրին առանձին-առանձին կերակրում էր արմայով՝ խաշած եգիպտա¬ցորենի հատիկներով: Վերջում ավելով թեթևակի խփում էր անասուններին, որ նրանք պտղաբեր լինեն: Այդ գործողության ընթացքում շնորհավորական խոսքեր արտասանելով՝ կրկնում էր նաև **«ալ փարի, դուլ փարի, խեր աչառ, եկ տուսի»** անհասկանալի արտահայտությունը: Ծեսի նպատակը Նոր տարում բերքի առա-տության, կենդանիների պտղաբերության և մարդկանց առողջության ապահովումն էր: Միսիանում Նոր տարին շատ անշուք [էր] անցնում, որովհետև նրանք տոնում են հայկական Նոր տարին, Նավասարդի մեկը, որ գալիս է օգոստոսին: Ոչ մի շնորահավորանք չէր լինում. երբեմն միայն հարազատները, միմյանց մոտ հավաքվելով, ուտում, խմում ուրախանում են[20]: Միսիանի պես Գանձակում ևս Նոր տարին անշուք [էր] անցնում: Առհասարակ ոչ խանութները և ոչ արհեստանոցներն են փակվում, ուստի և շատ քչերն են այցելում միմյանց: Քաղաքում առավոտը վաղ պատարագ են մատուցում, որպեսզի տարին լավ անցնի:

---

[14] Շահազիզ Եր., Նշվ. աշխ.: Ամանորին նվիրված այդ հացով տարվող գուշակությունն այժմ դուրս է եկել կենցաղից: Միայն ծերերն են հիշում, որ իրենց մանկության տարներին եղել է այդ սովորույթը:

[15] Մխիթարեանց Աղ., Տարուայ նշանաւոր տօները, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա N1, Մոսկուա-Ալեքսանդրապօլ 1901, էջ 261:

[16] Օդաբաշյան Ա., Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Եր., 1978, հ 9, էջ 52-53:

---

[17] Ավանեսով Հ., Համշենահայերի տոներն ու ավանդույթները հայկական մշակույթի համատեքստում, §Համշեն¦, 2013 N 16:

[18] Առավել մանրամասն տե'ս Թոռլաքյան Բ.-ի ֆոնդ, h 4, էջ 226:

[19] Այս մասին մանրամասն տե'ս Խաչատրյան Ժ-ի ֆոնդ, Հայկաձոր, ասացողª Վարդան Ղուկասյան:

[20] Լալայեան Ե., Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, Թիֆլիս 1898, գիրք Զ, N 1, էջ 249:

Այցելելով միմյանց՝ շնորհավորում են Նոր տարին և բարեմաղթում առողջություն և հաջողություն: Այցելուներին հյուրասիրում են սուրճով և ընկույզի ու նշի[21] գոզինաղով[22]: Գյուղերում խնձոր կամ կիտրոն են տանում և տալիս, ում որ շնորհավորում են: Իսկ նրանց հյուրասիրում են օղիով և չոր մրգեղենով: Մի քանի տներում դռան ճակատը զարդարում են կարմիր թելերով, որպեսզի Նոր տարին ուրախ անցնի[23]: Ինչպես հայկական մյուս ազգագրական շրջաններում, այնպես էլ Արցախում հեթանոսական տոների ժառանգորդ քրիստոնեական տոները ձուլվել են հեթանոսական ծեսերի հետ: Տարբեր տարիքի մարդկանց լայն մասնակցությունը տոներին արտահայտվում էր ոչ թե հոգևորականների մասնակցությամբ կատարվող եկեղեցական պատարագներով ու թափորներով, այլ ժողովրդական զվարճանքների ձևով: Այստեղ ոչ այնքան եկեղեցին էր թափանցում համաժողովրդական անձնական կյանքի մեջ, որքան ավելի շուտ վերջինս[a] եկեղեցու մեջ: Կային տոներ, որոնք ամենևին չէին նշվում եկեղեցու կողմից: Այդպիսին էր Նավասարդը[a] հին հայկական Նոր տարվա տոնը ի տարբերություն մյուս բնակավայրերի Արցախում տոնվում էր ոչ թե օգոստոսի 11-ին, այլ նոյեմբերին[a] աշնանը[24], որը խորհրդանշում էր տնտեսական տարվա ավարտը[25] ինչպես եղել է հնում, որը դարեր առաջ հանդիսավոր ու շքեղ տոնում էին հայ թագավորները ողջ ժողովրդի մասնակցությամբ: Այն մինչև վերջին ժամանակներս կայունությամբ պահպանվում էր Արցախի բոլոր գյուղերում: Ճիշտ է, Շուշի քաղաքում այն մոռացության էր տրվել և փոխարինվել հունվարի 1-ի տոնակատարությամբ[a] փոխադարձ այցելություններով ու շնորհավորանքներով: Սակայն գյուղական բնակչության շրջանում Նավասարդի[26] նախօրեին շարունակում էին թխել զանազան թխվածքներ /կաթնահունց, քաղցր խորիզով[27] ականջիկներ/, եփում էին ոչխարի մսով ու ցորենի ձավարով կորկոտ, տան բոլոր անդամների, հատակպես երեխաների համար գնում էին նոր շորեր ու կոշիկ/այս սովորույթը տարածված էր հայկական ազգագրական բոլոր շջաներում /ՀԱ/, մայրը երեխաներին չիր ու քաղցրավենիք էր բաժանում /ներկայումս այդ ավանդույթը պահպանվել է՝ կրելով որոշակի փոփոխություններ ՀԱ/: Այդ տոներին նվերներ էին փոխանակում հարևաններն ու բարեկամները /այս ավանդույթը այժմ էլ պահպանվում է /ՀԱ/: Հատկանշական է, որ այդ օրը տանտերերը հատուկ շնորահավորում էին գյուղի տանուտերին և քահանային ու նվերներ՝ խնձոր ու գինի, տանում նրանց:

---

[21] **Նուշ-** պատկանում է վարդազգիների ընտանիքի սալորենիների ենթաընտանիքին:

[22] **Գոզինաղ**-մորաբա/ՀԱ/:

[23] Լալայեան Ե., Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, Թիֆլիս 1900, գիրք Զ, N 6, էջ 363:

[24] Ավանեսով Հ., Հայկական տոներն ու ավանդույթները արցախյան կենցաղում. Ընդհանուր բնութագիր, §Նոր Շահումյան¦, թիվ 22 16-30 նոյեմբեր 2014:

[25] Հայկական ավանդական այս տոնը, ընդհուպ մինչև XX դ. սկզբները, որոշ փոփոխություններով հանդերձ, Գանձակի ու Վարանդայի ազգագրական շրջանների հետ միասին առավելապես պահպանվել էին նաև Սյունիքում, Գողթնում և Պարսկահայքում, որտեղ Նավասարդը ժամկային առումով տատանվում էին ամռան վերջերից մինչև ուշ աշուն: Չնայած մասնակի առանձնահատկություններին, նավասարդյան ծիսական արարողությունները ունէին ընդհանրական մի շարքգ ծեր: Դրանք հիմնականում նշվում էին աշնանը՝ համընկնելով բերքահավաքին, այգեկութին, նախրաթողին, ու միևնույն ժամանակ, իրենցից ներկայացնում էին գյուղատնտեսական աշխատանքային պայմանադրությունների յուրօրինակ ծիսական սահմանագիծ: Վերջինս հատկապես նկատվում էր Տավուշին Արմավիրի գյուղական բնակավայրերում, ուր արդեն գրեթե մոռացվել էր Նավասարդի՝ տոն լինելու հանգամանքը: Հարկ ենք համարում նշել նաև, որ ղարա- բաղցիների տոնածիսական արարողությունների վարքագծային նմանությունները, հատկապես՝ Լոռու, Տավուշի, Սյունիքի և Գողթնի հետ, հիմնականում պայմանավորված էր աշխարհագրական դիրքով ու միգրացիոն ակտիվ տեղաշարժերով, որի արդյունքում ձևավորվել էին գրեթե միանման կենցաղամշակութային համալիրներ: Մկրտչյան Ս., Տոները ղարաբաղցիների ավանդական կենցաղում,

Այդ օրը բակում ծառերից կարմիր գույնի շոր ու զանանզան կարմիր լաթի կտորներ էին կախում /Սոս/[28]:

---

Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկանն ապագան: /Միջազգային գիտաժողով/, Եր., 2007, էջ 397:

[26] Լալայան Ե., Վարանդա, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1898, գիրք Գ, N 1, էջ 338-349: Լալայան Ե., Գանձակի գավառ, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1900, գիրք Զ, էջ 232-382: Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը /ազգագրական ակնարկ/, ՀԱԲ, h 12, Եր., 1981, էջ 67-73: Դաղյան, Ջան-գիւլումներ. Վարանդայի բանավոր գրականությունից, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1908, գիրք XVIII, էջ 25-32: Իսրայելյան Ս., Լեռնային Ղարաբաղի Փիրջամալ, Նախիջևանիկ և Շուշի քաղաքի ազգագրական նյութեր, 1970, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս I և II /N355-356/, 48:Գրիգորյան Գ., Ղարաբաղի ազգագրական նյութեր /գ. Սպանդարյան/, 1970-1971, Եր., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 19, մասեր՝ I և II, տետրեր՝ I, II, III, IV: Վարդանյան Ս., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Շուշիի շրջան, 1970 թ. հունիս-հուլիս, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, տետր NNFF VII, էջ 6189: Ղազիյան Բ., Ղարաբաղ, Տարբեր ժամանակներ, 1973-ից սկսած, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, տետր 1: Բեգյան Մ., Լեռնային Ջագիր գյուղի ավանդական սովորություններ, արհեստներ և ծեսեր, Եր., 1985, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս III, IV, 11/150: Ղազարյան Ն., Գանձակի գավառի /Ելիզավետպոլի/ հայկական բնակավայրերը և պատմական ճարտարապետական հուշարձանները. Գյուլումներ /Բարսում, Ջագիր, Խաչակապ/, Եր., 1984, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 5/116, թղթ. 4: Նաև՝ Գանձակի գավառ, Եր., 1985 թ., 2/124, թղթ. 1:

[27] **Խորիզ**-թխվածքի մեջ լված որևէ բանի զանգված՝ միջուկ, Աղայան Է., Արդի Հայերենի Բացատրական Բառարան, Եր., 1976, h1, էջ 604:

[28] Հայ ժողովրդի ազգային տոները, Մեսրոպյան Կ-ի խմբագրությամբ /մաս առաջին/, Ստեփանակերտ, 2003, էջ 8-9:

Խարբերդում Նոր Տարին համապատասխանում է ծննդյան պահոց երրորդ օրվան: Այդ օրվա ճաաաղեանը հարուստ պետք է լինի պահքին հատուկ կերակրատեսկներով, պտուղներով, օղիով ու գինով: Այդ իսկ պատճառով տան կանայք դեկտեմբերի 30-ին սկում են ճաշատեսկների պատրաստման աշխատանքները: Նոր տարվա սեղանին դնում են գաթա, բոկեղ[29], անուշապուր[30]: Ազգագրական մյուսշրջանների պես Խարբերդում նույնպես հարևաններն ու բարեկամներ միյանց հետ փոխանակում են նվերներով[31]:

Հայկական մի շարք ազգագրական շրջաների պես Մարաշում ևս Նոր տավա սկիզբը` տարեմուտը տոնում էին հունվարի 1-ին/այս ավանդույթը մինչ օրըս պահպանվում է սակայն պատմական հայրենիքից- Մրաաշից դուս ՀԱ/, վերոնշյալ տոնը ժողովրդական բարբառով անվանում են **Կաղընտէս**[32] որը Կաղանդ /Նոր Տարի, Ամանոր/ բառի բարբառային տարբերակն է: Հայկական մյուս ազգագրական շրաների նման Մարաշում նունպես Նոր տարվա տոնա-ծիսական արարողությունները կենտրոնացված էին եկեղեցում, սակայն տոնի հետ սերտաճել են ժողովրդական սվորույթները, որոնք ընդանրություններ ու տարբերություններ ունեն հայական միշարք բնակավայրերի Նոր տարավա ծիսական համակրգի հետ[33]: Նոր տարվա սեղանի զարդն է *ըռպէվ շորվին* /անուշապուր/՝ ծեծածով[34], սիսեռով և ռուպով /ռուփով/[35] պատրաստվ- ած ապուրը:

---

[29] **Բոկեղ**-մանյակի ձևով փափուկ հաց, որը պատաաստում են յուղով և ռուպով/պտղից քամածհյութ, մանավանդ եփած` թանձրացած մաթ, դոշաբ, խաղողի քաղցու, մաթ. Բառգիրք հայերէն լեզուի։ Անդրանիկ Վրդ. Կռանեան, Պէյրութ, 1998: Էջ 402, Մալխասեանց Ստ.,Հայերէն Բացատրական Բառարան, Եր., 1945h 4, Էջ 165:

[30] **Անուշապուր**- մատուցվում է Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին: Այն ավանդաբար իր տեղն է գտնում Հայոց Հայրապետների սեղանին և համարվում է պասային հրուշակ:

**Բաղադրիչներ**

Կես բաժակ ցորեն` լվացած և չորացրած
6 բաժակ ջուր
¾ բաժակ ծիրանաչիր` կիսած
¾ բաժակ չամիչ (քիշմիշ)
1 բաժակ շաքարավազ
1 թ.գ. վանիլին
¼ բաժակ ընկույզ` կտրատած
¼ բաժակ նուշ
¼ բաժակ նռան հատիկ (ըստ հայեցողության)

**Պատրաստման եղանակը**

Չուգունե կաթսայում խառնել ջուրն ու ցորենը և բարձր կրակի վրա հասցնել եռման աստիճանի: Հեռացնել կրակից, դնել մի կողմ:
Հաջորդ օրը խառնուրդը մարմանդ կրակի վրա եփել, ավելացնել ծիրանաչիր, չամիչ, շաքարավազ, և, անհրաժեշտության դեպքում, մի փոքր ջուր, որպեսզի լուծվի շաքարը: Եռացնել ևս 30 րոպե` ժամանակ առ ժամանակ խառնելով:
Վերցնել կրակից, ավելացնել վանիլին: Անուշապուրը պատրաստ է: Լցնել այն ափսեի մեջ, որով մատուցվելու է, դնել սառնարանը: Մատուցելուց առաջ զարդարել ընկույզով ու նուշով[30]/ Հայկական ամանորյա հրուշակ. Անուշապուր ,http://civilnet.am/2014/12/16/armeniancuisine-anou-shabour/#.VNiY6OasXhA/:

[31] **Թաշճեան** Վ., Խարբերդ- Տօներ http://www.houshamadyan.org.

[32] Գալուստեան Գ., Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Բ. հրատ., Նիւ Եորք, 1988, էջ 333:

Մարաշցի կանայք ձեթով և չորբանջարեղեններով պատրաստում են ճաշեր ու աղանդներ:

Նոր տարուան սեղանի զարդն է Մարաշցի տանտիկինը կը պատրաստէ ձէթով եւ չոր բանջարեղէններով ճաշեր ու աղանդերներ: Այս բոլորին շարքում հատուկ տեղ ունեն մառանի մէջ պահ դրված չոր և թարմ մրգերն ու զանազան քաղցուեղենները[36]՝ շարոց[37], բանդակ[38], պաստեղ[39], գըրմա-ղըրմա[40]…:

Ընդամենը հարյուր տարի է, ինչ հայը, ընդօրինակելով օտարներին, Ամանորն սկսել է տոնել ձմեռվա կեսին: Դա արդեն սովորույթ է դառնում: Արեգակնատենչ հայը դժվարությամբ է հաշտվում Ամանորը հունվարի 1-ին նշելու սովորույթի հետ: Հայը պարտադրված էր ընդունել Հռոմում հորիված Գրիգորյան տոմարը և Ամանորը նշում է ձմեռվա սառնամանիքին: Բայց հենց գալիս է մարտի 21-ը հայի հոգին տրտինգ է տալիս և արյան կանչով նա մտաբերում է իր ամենաառաջին Ամանորը[41]: Սուրբ Ծննդյան տոնը մեծահանդես արարողությամբ և խունկերամ հավատացյալների ներկայությամբ տոնվում է ողջ քիրստոնյա աշխարհում: Քրիստոնեության սկզբնական շրջանում Հիսուսի ծննդյան տոնը հայտնի էր «**Աստվածահայտնություն**» անունով: Չկա մի աղբյուր, որով հնարավոր լինի ապացուցելու Հիսուսի ծննդյան ճշգրիտ օրը: Համաձայն հավաստի աղբյուրների՝ երկրորդ դարի կեսից հետո Աստվածահայտնության տոնը նշվում էր հունվարի 6-ին, բայց այս տոնակատարությունը հավաքական տոնի բնույթ ուներ: Դ դարից հետո Հռոմի կաթողիկէ եկեղեցու որոշմամբ Հիսուսի ծնունդը սկսեցին տոնել դեկտեմբերի 25-ին, իսկ մկրտությունը[a] հունվարի 6-ին:

---

[33] Խառատեան-Առաքելեան Հ., Հայ ժողովրդական տօները, Եր., 2000, էջ 18-27:

[34] **Ծեծած**-Տիզ, կորկոտ, թեփը մաքրած ցորեն, Աճառեան Հր., Հայերէն Գաւառական Բառարան, Թիֆլիս, 1913,էջ 511:

[35] **Ռուպ**-Թանձրացած կաթ , մածուն, Հայր Մկրտիչ Աւգերեան եւ Հայր Գրիգոր Ճէյալեան, Առձեռն Բառարան Հայկազնեան Լեզուի Վենետիկ, 1865, էջ 709:

[36] Քէշիշեան Վ., Մարաշի սանճաք – Տօներ, http://www.houshamadyan.org/ arm/ mapottom anempire- /vilayetaleppo/marash/religion/festivals.html.

[37] **Շարոց**-Թելի վրա շարված ընկույզի միջուկ, որը խաղողի շաքարաջրի՝ քաղցուի, մեջ թաթախելով՝ կը չորացնեն, Գնէլ Արքեպս. Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան Հայոց Լեզուի Նոր Բառարան, Պէյրութ, 1992, էջ 444:

[38] **Բանդակ**- Շաքարամիրգ, քաղցրավենիք, Յարութիւն Թ. Գայայեան , Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի, Գահիրէ, 1938, էջ 60:

[39] **Պաստեղ**-Խաղողի թանձրացած մուզով/մարխոշ, թթվաշ, Ջահուկյան Գ., Հայերեն Ստուգաբանական Բառարան, Եր., 2010, էջ 536/, և ալյուրով պատրաստած ուտելիք, Գաբամաճեան Ս., Նոր Բառագիրք Հայերէն Լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 1123:

[40] **Գրրմա-ղրրմա**-փոխինդ, փոխինձ, Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի յուշեր:Հուշագրություն, կազմեց Տեր-Ղևոնդյան Վ., Եր., 2013, էջ 421:

[41] Խաչատրյան Հ., Հայոց հնօրյա զվարճախոսները, Եր., 2003, էջ 114:

**Սուրբ Ծնունդ**

Արևելքում Ս. Ծննդյան տոնը նշվում էր հունվարի 6-ին: Ե դարում բոլոր քրիստոնյա եկեղեցիները Ս. Ծնունդը սկսեցին տոնել դեկտեմբերի 25-ին, իսկ հայոց եկեղեցին հավատարիմ մնաց իր սովորությանը: Միայն հայերը, հավատարիմ մնալով հնավանդ սովորությանը, շարունակում են հունվարի 6-ին տոնել Աստվածահայտնության, Ծննդյան և Մկրտության տոնը: Կաթոլիկ եկեղեցին հունվարի 6-ին կատարում է Մկրտության տոնը[42]: Համշենցի հայերը Ծննդի առաջին օրը, առավոտյան և երեկոյան ժամից հետո, շատեր սովորոթյուն ունեին ժամավորներին «քաթայ» բաժանելու: Նրանց «քաթան» կլոր, անխմոր բաղարջ[43] հաց է, սովորական ցորենի հացի պես, ոչ յուղ ունի ոչ էլ առանձին անուշ համ: Ցորենի հետ սովորաբար սիմինդրի /եգիպտացորենի/ ալյուր էլ են խառնում. մի քիչ էլ մեղրաջուր կամ «բէքմեզ»:

---

[42] Հայ ժողովրդի ազգային տոները /մաս առաջին/, էջ 10-11:

[43] **Բաղարջ**- առանց խյուսի/շախաղի/ և յուղի թղած գաթա, Աղայան Է.,նշ.աշխ, էջ 164:

Քաթան բաժանում էին նաև ավագ հինգշաբթի օրը և Զատիկի ճրագալույցին[44]:

**Հայկական գաթա**

Նոր Նախիջևանում Ծննդեան ճրագալույցի ժամերգությունը շատ կանոխ է սկսվում, համեմատաբար շատ կանոխ էլ վերջանում է: Եկեղեցում ժամավորներից շատերը կանգնում են վառած մոմերով ոչ միայն Դանիելի գրքի ժամանակ, այլև առհասարակ ժամերգության սկզբից մինչև պատարագը: Դանիելի գիրքը, ինչպես ամեն տեղ, այստեղ էլ կարդում է երեխաներից մեկը, և Սեդրակի, Միսաքի և Աբեդնակովի խոսքերի, որ արտասանում են երեք մանուկª միասինª նույնպես առանձին կանգնած. «Օրհնեցեք»-ը երգում են բոլորը միասին Ճրագալույցի ընթրիքի համար, բացի սովորական կերակուրներիցª ձկնախաշուից, տապակած ու խաշած ձկնեղենից, պատրաստվում է անպատճառ և «կուբաթի»[45], որը ուտում են ձկնախաշուի հետ միասին: կուբաթին նման է ռուսական «պիրոգին», բայց ավելի նուրբ է, ավլի ճաշակով է պատրաստվում, ավելի համադամ[46] է, քան թե սովորական պիրոգը[47]: Արցախում այս տոնը ամենից քիչ է ենթարկվել հեթանոսական տեղական երանգավորումներին: Նախորդ օրը թխում էին անալի կարկանդակ կըրկէնիª ձեթով, ալյուրով, ու ընկույզով, որի մեջ նախօրոք խառնում էին սիսեռ կամ լոբի, մանր արծաթադրամ՝ ի նշան դովլաթ-ի[48]:Այս կըրկէնին հանդիսավոր, ողջ ընտանիքի ներկայությամբ կտրում էին, ընդ որում, բաժին էին հանում նաև ընտանիքի բացակա անդամներին, կենդանիներին, նույնիսկ շանը /այս ավանդույթը տարածված էր նաև համշենցիների մոտ, Նոր տարվա տոնակատարությունների ժամանակ /ՀԱ/, չէր մոռացվում նաև տան օջախը: Ում բաժին ընկներ դովլաթը, այդ տարվա ողջ ընթացքում նրա վրա էլ պետք է հիմնվեր ընտանիքի բարօրությունը. այս սովորույթը տարածված էր հայկական ազգագրական բոլոր շրջաներում [49]: Կան ազգագրական շրջաներ, որտեղ նշանի տեր մարդը ունենում է որոշակի պարտավորություն ՀԱ/:

---

[44] Մուրադեանց Յ., Համշենցի հայեր, Ազգագրական հանդես, Թիֆլիս 1900, գիրք Զ, N6, էջ 157:

[45] **Կուբաթի** -քառասուն թել խմորից թխած կարկանդակ, Հայոց Լեզվի Բարբառային Բառարան, Եր., 2004 h 3, էջ 199:

[46] **Համադամ**-համեղ, ընտիր, Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հրանդ Գանգրունի եւ Փարամազ Կ. Տօնիկեան , Հայոց Լեզուի Նոր Բառարան, Պէյրութ, 1968,էջ 398:

[47] Շահազիզ Եր., Նշվ. աշխ.էջ 9,12:

Խարբերից տարածաշրջանում հայ ազգագրական մյուս շրաների պես Ճրագալուցին հարորդ օրը հունվաիր 6-ին այցելում էին եկեղեցի/այժմ այս և մյուս տօները ներկայումս Արևմտյան Հայաաստանում բնաղկվող այալադավան հայերի մի մասը թաքուն նշում են ՀԱ/ Քրիստոսի Ծնունդը նշելու: Այդ օրը տեղի էր ունենում ջրորհնեքի արաողությունը: Խաչ դրված է լինում ջրով լիքը մեծ կացսայի մեջ և քահանան հարցնում. «ո՞վ պիտի լին Ս. Խաչի կնքահայրը»:Եվ կսվի աճուրդը/ երևույթ որ հազվատեպ էր հանդիպվում հայ ազգագրական մյուս շրջաներումՀԱ/: Մեկը կը՝առաջարկե տասը դուրուշ, մեկ ուրիշը մեկ օխա (1 օխա = 1,28 քկ.) մանած, մեկ ուրիշը մէկ օխա մոմ կամ մեկ լիթր ձեթ: Ի վերջո Տեր հայրը ընտրույթւնը կը կատարե ու ընտյալ կնքահոր եկեղեցական հագուստ կհագցնե/ներկայումս այս երևույթը տարածված Հայաստանի բոլոր բնակավայերում, սակայ Ս.Խաչի կնքահոր ընրությունը կատարվում է առանց աճուրդի ՀԱ/, կնքահայրը խաչ դուրս կհանի ջրից ու կը պարզի դեպի հավատացյալների կողմը[50]:

Բոլորը հավատում էին, որ Նոր տարուց մինչև Ծնունդ տեղի ունեցող բոլոր դեպքերն ու իրադարձությունները իրենց ազդեցությունը պետք է ունենային ամբողջ տարվա վրա: Տոնի գլխավոր գործողությունները միայն այդ օրերին պարտադիր խաղացվող խաղերն էին, որոնց արվեստագետները տալիս են Ֆոլկլորային թատրոն ընհդանուր անունը: Այդ խաղերը հնում որոշակի սցենարով, երգ ու պարով, ապա և երաժշտությամբ կատարվող ծիսական արարողություններ էին: Տիպաբանական ու համեմատական ուսումնա¬իրությունը հնարավոր է դարձնում ավանդականի բացահայտումը: Այդ պատճառով խաղերը սկսել են բաժանվել երկու խմբի՝ ծիսական և շարժական խաղերի /ժամանցի/:

---

[48] **Դովլաթ**-Հաջողություն, երջանկություն բերող անձ կամ իր/ Սարգսյան Ա, Ղարաբաղի բարբառի, բառարան/այսուհետ ՍԱ ՂԲԲ/, Եր.,2013,էջ 132/:

[49] Հայ ժողովրդի ազգային տոներր /մաս առաջին/, էջ 12:

[50] Ապտալ Գոյէճ Պօղոսեան, Բազմաշէնի ընդարձակ պատմութիւն, Պոստոն, 1930, էջ 72-74, տես նաև Թաշճեան Վ., նշվ. աշխ.:

Ծննդյան տոների դիմակահանդեսներն ու կերպարանափոխությամբ խաղերը կապում են ամսվա կամ տարվա առաջին օրերին տրվող կախարդական, հմայական նպատակադրման հետ, որով նախատեսվում էր լավ սկիզբ և բարօրություն:

## Տիրոջ մկրտությունը

(Մկրտության ութ տեսակները)

Առաջին՝ Ջրհեղեղի մկրտությունը [տեղի ունեցավ] մեղքը հատելու նպատակով:

Երկրորդ [մկրտությունը] ծովի ու ամպի միջոցով էր, քանի որ ամպը Հոգու խորհրդանիշն է, իսկ ծովը՝ ջրի:

Երրորդ [մկրտությունը] Օրենքինն էր, որովհետև անմաքուր յուրաքանչյուր մեկը լվացվում էր ջրով, լվանում էր իր հանդերձները և այդպես էր բանակատեղի մտնում:

Չորրորդ [մկրտությունը] Հովհաննեսինն էր, որը ներածական էր և մկրտվողներին ապաշխարության էր առաջնորդում՝ որպեսզի Քրիստոսին հավատան. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, – ասում է, – բայց Ով գալիս է իմ հետևից, Նա ձեզ կմկրտի Սբ. Հոգով ու հրով»: Արդ, Հովհաննեսը ջրով նախասրբում է Հոգու համար:

Հինգերորդը Տիրոջ Մկրտությունն է, որով Նա մկրտվեց: Եվ մկրտվում է՝ ոչ թե Ինքը մաքրության կարիքն ունենալով, այլ իմ մաքրությունը յուրացնելով, որպեսզի ջրի վրա վիշապների գլուխները ջախջախի, որպեսզի մեղքը ջնջի, որպեսզի ողջ հին Ադամին ջրի մեջ թաղի, որպեսզի Մկրտչին սրբացնի, որպեսզի Օրենքը կատարի, որպեսզի Երրորդության խորհուրդը բացահայտի, որպեսզի Մկրտության համար մեզ տիպար և օրինակ ծառայի: Եվ մենք մկրտվում ենք Տիրոջ կատարյալ Մկրտությամբ՝ ջրով ու Հոգով: Բայց ասված է, որ Քրիստոսը հրով է մկրտում, որովհետև Հոգու շնորհը սբ. առաքյալների վրա հրե լեզուների տեսքով հեղեց, ինչպես որ Ինքը Տերն է ասում. «Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց դուք այս օրերից ոչ շատ հետո պիտի մկրտվեք Սուրբ Հոգով» (Գործք 1, 5): Կամ էլ [նկատի ունի] ապագայի պատժիչ մկրտությունը:

Վեցերորդ [մկրտությունն] ապաշխարությամբ ու արցունքներով է՝ իրապես տառապալի:

Յոթերորդ [մկրտությունն] արյամբ ու մարտիրոսությամբ է, որով և Քրիստոս Ինքը մեզ համար մկրտվեց՝ որպես հույժ պատվական ու երանելի [մկրտությամբ], քանի որ հետագա աղտերով [այլևս] չի կեղտոտվում:



**Մկրտություն Անհայտ ռուս նկարիչ, 19-րդ դար**

Ութերորդ՝ վերջին [հրո մկրտությունը] փրկական չէ, այլ վերացնում է չարիքը (քանզի դրանից հետո չարիքն ու մեղքն այլևս չեն լինելու) և անվերջանալիորեն պատժում է [մեղավորներին][51]:

Համշենահայերը մկրտության տոնը նշել են եկեղեցական կարգով: Վաղ առավոտյան բոլորը գնացել են եկեղեցի՝ պատարագին մասնակցելու: Այդ օրը տեղի են ունեցել նաև զոհաբերություններ: Բանահավաքների հաղորդած տվյալների համաձայն՝ հնում մկրտության, Ջրօրհնեքի ժամանակ խաչը գցել են ծովը, իսկ լողորդները մտել են խաչը հանելու: Խաչի մկրտության արարողությունը կատարվել է եկեղեցու ավազանում: Սբ. Ծնունդի, Ջրօրհնեքի, Մկրտության տոներին պատարագից հետո եկեղեցու բակում երեք օր շարունակ տեղի են ունեցել տոնախմբություններ, մրցույթներ, խաղեր ու տոնավաճառ, որի ժամանակ նաև երգել ու պարել են, կազմակերպել ձիարշավ[52]:

## Տյառնընդառաջ

---

[51] Մկրտության ութ տեսակները, http://www.orthodoxkyanq.org/. Ἁγίου Ἰωάννου Δαμα- σκηνού, Ἔκθεσις ἀκριβής τῆς ὀρθοδόξου πίστεως , PG 94, σσ. 1117-1125, հին հունարենից թարգմանեց Ղազարյան Գ.-ն:

[52] Ավանեսով Հ., Համշենահայերի տոներն ու ավանդույթները հայկական մշակույթի համատեքստում, §Համշեն¦, 2013 N17:

## (Դըռդօռունք, Դռդոռաջ, Դօնդօռոնք,Տրընդեզ)

Տերընդեզ՝ դարմանը կես,
Առ հաց ու կես, ելիր գեղես,
Տերընդեզ, մխի դին տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես[53]:

